ԱԼԻՔ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թիֆլիս	Ռուսաստան	Օտարուհման
Տարեկան 6 ր.	Տարեկան 7 ր.	Տարեկան 32 ֆր.
½ տարին 3 ր.	½ տարին 3 ր. 50 կ.	½ տարին 16 ֆր.
Ամսական 60 կ.	Ամսական 70 կ.	Ամսական 3 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վճարն է առաջին երեսում խմբագրական տողին 6 կոպէկ, իսկ վերջին երեսում 3 կոպէկ:
Մեծ և տևողական յայտարարութիւններ առանձին պայմանով:

Խմբագրութիւնը բաց է 10—3 ժ. և երեկոյեան 6—8 ժ., իսկ կիրակի և տօն օրերին ցերեկ 12—2 ժ.:

Խմբագրութեան հասցէն. Թիֆլիս, Ֆրէյլինսկայա փող. № 6. Тифлисъ. Редакція „Аликъ“, Фрейлинская, № 6. կամ Rédaction „Alik“ Tiflis (Russie).

Հեռախօս № 90

№ 8 ՇԱԲԱԹ 6 ՄԱՅԻՍԻ 1906 Թ. — ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ — 1906 Թ. ՄԱՅԻՍԻ 6 ՇԱԲԱԹ № 8

„ԱԼԻՔ“-ի առանձին համարն արժէ 3 կոպէկ.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱԼԻՔ“

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՕՐԱԹԵՐԹԻ

Մայիսի մէկից մինչև տարւայ վերջը—Թիֆլիսում—4 ր. Թիֆլիսից դուրս—4 ր. 75 կոպ., Արտասահման—22 ֆրանկ:

Դիմել՝ Тифлисъ редакція «Аликъ» կամ Tiflis (Russie) Rédaction «Alik».

Խմբագրատունը գտնւում է Թիֆլիսում, Ֆրէյլինսկայա փողոց № 6.

Կատարինէ Գէորգեան և Վարվառէ Լազարեան Լազարեանները յայտնում են իրենց ազգականներին և ծանօթներին, որ կիրակի, մայիսի 7-ին, լինելու է քառասնօրեայ հոգեհանգիստ իրենց սիրելի և անմոռանալի վաղամեռիկ առաջնեկի համար, իսկ երկրորդի քրոջ

ՄԱՐԻԱՄ ԼԱԶԱՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆԻ

Հոգեհանգիստը կատարւելու է ժամը 12-ին, պատարագից յետոյ Մողնու ս. Գէորգ եկեղեցում:
187 1—1

Խորապէս վշտացած Սիրանոյշ Քալթախեանն իր զաւակների հետ և Նունէ Գրիգորեան Տէր-Ստեփանեանը յայտնում են իրենց ազգականներին և ծանօթներին, առաջինն իր անմոռանալի ամուսնու, երկրորդը իր թանգագին փեսայի

ԱՐԱՄ ՄԻՆԱՍԵԻՉ ՔԱԼԹԱԽԵԱՆԻ

Վաղաժամ ու եղերական մահը: Ցուրտ դիակը թաղւելու է կիրակի ամսիս 7-ին, առաւօտեան 10 ժամին, իր բնակարանից՝ Վէլիկօկնեաժեսկայա փողոց, տուն № 13 Տէր-Ստեփանեանի, դէպի Կուկիայի ս. Աստւածածին եկեղեցին (Վօրօնցովի արձանի մօտ): Հոգեհանգիստը կը կատարւի այսօր երեկոյեան ժամը 7-ին:
188 1—1

ԲԱՑՒԱԾ Է

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԻՒՐՕ

„ԱՇԽԱՏԱՆՔ“

Առաջարկւում է ամեն տեսակ ծառաներ, դաստիարակներ, խոհարարներ, մշակներ, զանազան տեսակի բանւորներ և այլն:
Առաջարկւում է նաև խնամակալներ աշխատաւորներ—գրագիր, հաշւապահ, կանտորշչիկ և այլն:
Բիւրօն բաց է առաւօտեան ժամը 9-ից մինչև 1-ը, երեկոյեան 5—7 ժամը:
Հասցէն՝ Пушкинскій Пассажъ № 17, վերին յարկ:
172 5—10

Քարածուխի պահեստ **ՆԱԻՖԻՐԱ**

Ա. Զ. ՄԱԴԱԹՕՎԻ ԵՒ Մ. Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ

Ծախւում է 3 ի պ ա յ ի բոլոր տեսակի

Կ Ի Ր (ИЗВЕСТЬ)

մատչելի գներով: Վագոնով առնողին զիջում: Նոյն տեղում ծախւում է ՔԱՐԱԾՈՒԽ, ԱՆՏՐԱՑԻՏ, ԱԾՈՒԽ, ԿՐԱԿԻՑ ՉԸ ՀԱՆՈՂ ՑԵՄԵՆՏ և ամեն տեսակի ՓԱՅՏ: Պահեստում գտնւում է վառարան շինող փորձւած վարպետ, վառարանները քարածուխին յարմարեցնելու համար:
Հասցէն՝ Արսատումանսկի փող., մաքսատան և տրամվայի պարկի դիմաց.
Հեռախօս № 1016. 179. 25—2

ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Կիրակի, մայիսի 7-ին
Խ. Ա. ՎԵՐՄԻՇԵԱՆԸ
կը կարդայ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Ռուսերէն լեզւով
«Կուսակցութիւնների նշանակութիւնը քաղաքական կեանքում»
Սկիզբն է 12 ժամին
Տոմսակները (1 րուբլուց մինչև 20 կ.)
Ծախւում են ժողովարանի շվէյցարի մօտ:
192 2—1

Վիճակախաղի տոմսերն արժեն 20 կ.
Զբօսանքի սկիզբն է ցերեկւայ ժամը 3-ին.
Եղանակի անյաջողութեան դէպքում զբօսանքը յետաձգւում է երկուշաբթի օրը մայիսի 8-ին:
190 1—2

Թիֆլիսի ամառային ժողովարանում կիրակի 1906 թ. մայիսի 7-ին. յօգուտ ձրի և էժանագին ճաշարանների կը կայանայ

ԶԲՕՍԱՆՔ

ՎԻՃԱԿԱԽԱՂՈՎ

Մանկական խաղերն սկսւում են ցերեկւայ ժամը 4-ից.
Պարերը երեկոյեան ժամը 6-ից պ. Ինօջենցու ղեկավարութեամբ.
Մուտքը մեծերի համար 25 կ., 10 տարեկանից փոքր երեխաների համար 10 կ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, մայիսի 6-ին

Դերասանուհի Օ. Մ. Մայսուրեանը բարեհաճ մասնակցութեամբ տ. Զարէլի և ժողովարանի թատերասէրների կը ներկայացնէ

ՊԱՇՏՊԱՆ

Դրամա 5 գործ., հեղ. Տիմկովսկու, թարգ. Տէր-Գէորգեանի:

Մասնակցում են տ.տ. Մայսուրեան, Զարէլ, օր.օր. Օթարեան, Հայկանուշ և Տէր-Աբրահամեան, պ.պ. Վանչիկ, Վ. Եղիկեան, Սարեան, Շիրինեան, Ասլանեան, Բէժանեան և ուրիշ.:

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան

Տեղերի գները 3 րուբլուց—60 կոպէկ:
Տոմսակներ կարելի է ստանալ ժողովարանի շվէյցարի մօտ: 186. 2—2

Թիֆլիս, 5 մայիսի

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԹԷ ԽԱՆՈՒԹԻՒՆ

I

«Արդարութիւնը լինելու է ամեն մի կառավարութեան յենարանը», ասել է Նուբար փաշան: Այդ խօսքերը դարձան Եգիպտոսի բարենորոգչի նշանաբանը, այդ ուղղութեամբ նա ձեռնարկեց յաջողութեամբ նրան կերպարանափոխել փարաւոնների երկիրը:

Մի կարճ նախադասութիւն է դա, փորագրւած տապանաքար հայի մահարձանի վրայ, բայց մի ամբողջ քաղաքականութիւն, միակ քաղաքականութիւն, որով ղեկավարւել են բոլոր բարեմիտ կառավարիչները, բոլոր առաջնակարգ հասարակութիւնները:

Արդարութեան այդ տենչն էր, որ մի տարի առաջ բանիմաց կովկասցիների ուշադրութիւնը հրաւիրեց դէպի հիւսիս. կարգ ու կանոն, խաղաղ կեանքի պահանջն էր, որ 1801-ին Թիֆլիսի ազգաբնակութեանը հարկադրեց հանդէսով գիմաւորել օտար զօրքերին:

Խանական կամայականութեան, դասակարգային ու ազգային արտօնութիւնների առաջ բերած աւերն ու կոյրն էր, որ կազմակերպեց պատմական «հայկական գունդը» և թելադրեց հայերին թափել արիւն ռուս զինւորների կողքին, թէ Երեւանի բերդի պատերի տակ, թէ «հայկական շրջանի» բազմաթիւ կիրճերում:

Մի դար է անցել այդ օրերից, ամբողջ հարիւր տարի:

Աշխատանքի միջոցները, հասարակական հարստութիւնը, հաղորդակցութեան ուղիները այս հարիւր տարւայ ընթացքում արել են ուրիշ վայրերում մի այնպիսի հսկայական թռիչք, որը պատկերացնել անգամ դժւար է:

Բոլոր քաղաքակիրթ երկրներում հաստատւել է օրէնք, հաւասարութիւն, քաղաքացիական իրաւակարգ: Հասարակական կեանքն արել է խոշոր քայլեր դէպի արդարութեան սկզբունքի յաղթանակը…

Իսկ մենք. ինչ է արել չինօվնիկական կենտրոնական վարչութիւնը Կովկասում, ինչ չափ նպաստել է նա մեր երկրի խաղաղացմանն ու առաջադիմութեանը, արդարութեան սկզբունքի հաստատմանը:

Ոչինչ բան, համարեա ոչինչ:

Մեր հայրերը զզւել էին ժառանգական խաների կամայականութիւնից, նրանց սաստրադրեալ բէգերի բռնութիւններից, կաշառակերութիւնից, կորուստ, զրաւոր, հաւասար օրէնքի բացակայութիւնից:

Նորեկ կառավարիչները տւին մեզ գրւած օրէնքներ, որ չէին բղխում մեր երկրի պայմաններից. հաստատեցին պաշտօնեաներ, որ չէին հասկանում, չէին կարեկցում, չէին սիրում տեղացիներին. կազմեցին դատարաններ, որ իրենց ձեւականութիւններով, ձգձգումներով, կաշառակերութիւններով զզւեցրին բոլորին:

Անցեալում «ընծան» մօվրօվի ու «դատաւորի» աշխատանքի վարձատրութեան մի ձև էր, վարձատրութիւն՝ որ վճարում էին մեղաւորները, կարեք ունեցողները: Այսօր մեր պաշտօնեաներն ստանում են չաղ-չաղ ռոճիկներ, բայց «կողմնակի հասոյթներ» և «ընծաներ» առնելում նրանք յետ չեն մնում մեծ ու փոքր պարսիկ խաներից:

Աւազակութիւնը, կողոպուտը, գողութիւնը բացառիկ դէպքեր էին արևելքի շատ վայրերում: Իսկ թղթի վրայ «բարեկարգւած» Կովկասը դարձել է այսօր թալանի մի եզակի աշխարհ. գողութիւնները տեղի են ունենում հսկայական չափերով. մարդու կեանքը ոչ մի արժէք չունի, քանի որ մի քանի տասնեակ րուբլով վարձկան մարդասպանները պատրաստ են կատարելու ամեն տեսակ ոճրագործութիւն:

Մեր հայրերը զուրկ էին ազատութեան, ինքնավարութեան որև է նշոյլից: Նրանք չէին կարող համախմբւել ու խորհել իրենց կարիքների մասին. ճանապարհներ էին պէտք—միմեանցից անջատ գիւղերը անկարող էին դրա մասին հոգալ. դպրոցներ էին հարկաւոր—դա «տխրայի» գործը չէր. բժիշկների կարիք էր զգացւում—դա «բաշայի» խելքի բանը չէր:

Եկան նոր կառավարիչներ «քրիստոնեայ», «կիրթ», «լուսաւորւած» և… իրերի դրութիւնը էապէս մնաց նոյնը:

Կովկասի ազգաբնակութիւնը հասունացած չէր գեմստվոների համար, իսկ «գլուխները» չը գիտակցեցին ճանապարհների, կամուրջների օգտակարութիւնը, «քըլստուհեաները» մոռացութեան աւելն անդամալոյծ ներին, հիւանդներին. «լուսաւորւածները»՝ խաւարն ընդունեցին իրենց նշանաբան:

Քառասուն տարի է, ինչ Ռուսաստանը վայելում է «զեմստվօյական» տեղական ինքնավարութիւն: Քառասուն տարի է ինչ մենք էլ վճարում ենք նոյն տուրքերը «տեղական» շինական պէտքերի համար: Բայց… որովհետև այդ քառասուն տարւայ ընթացքում ժողովուրդը մեզ մօտ մնաց զուրկ նախաձեռնութեան, տեղական ծախքերի հսկողութեան իրաւունքից—շինական ճանապարհները Կովկասում այսօր էլ համարեա գոյութիւն չունեն: Դպրոց յաճախողների թիւը երկու անգամ պակաս է Ռուսաստանից, բժշկական օգնութիւնը մեր գաւառներում ու գիւղերում կազմակերպւած է հինգ անգամ աւելի վատ, քան բուն Ռուսաստանում:

Կովկասի անտեսական առաջադիմութեան տեսակէտից եւ մեր բիւրոկրատները շատ հեռու չը գնացին նախկին խաներից:

ԻՆՉ ՆՊԱՏԱԿՈՎ

Ինչ նպատակով… Մարդ ակամայ իրեն այս հարցն է տալիս ամեն անգամ, երբ մտաբերում է Ի. Լ. Գորեմիկինի մինիստր-նախագահ նշանակւելը:

Ինչու համար բիւրոկրատիան ժամանակակից քաղաքական ալեկոծող մթնոլորտի մէջ նետեց իր՝ թէև անհատապէս ջենտլմէն, բայց քաղաքականապէս բոլորովին մեռելատիպ ծառային:

Երևի այն պատճառով, որ համաձայն ռուսական առածին, «մեռած քարի տակ ջուր չի հոսի»:

Երևի կարծում էին, որ միայն այդ մեռելատիպ բիւրոկրատը միայն կը կարողանայ իր մեռելութեան շնչով թունաւորել ամեն ինչ, և ամեն բան:

Միամիտ յոյս. կարծես թէ բիւրոկրատական կանցելարիաներում զօրացած 73-ամեայ մինիստրը կը կարողանայ իր թունաւոր շնչով թառամեցնել ռուսական կեանքի գարնանային վերածնութիւնը:

Եւ կարծես, իրենք էլ, «բարձրագոյն շրջանները» կասկածում էին, թէ կը կարողանայ, արդեօք, Գորեմիկինը մենակ կատարել իր միսսիան:

Դրա համար նրան օգնականներ տւեցին, մէկը միւսից գերազանց… ամարդութեան կողմից: Արժէ միայն յիշել Ստոլիպինին, Շչեգլովիտովին, Կոկովցեվին և—Շիրինսկուն:

Գիտէք ով է այդ վերջինը:—Կառավարչական ապիտակ տերրորի մի խենթ սիրահար, որը ճորտատիրութիւնը, նախնիկ պատմական մեծ սխալ, աւելի եւ դժբախտութիւն էր համարում… 1861 թւականի փետրւարի 19-ի օրը:

Գիւղացիներին ճորտութիւնից ազատելու օրը:

Բայց որովհետև այդ անցեալ—կատարւած փաստ էր և նա ոչ մի հնարաւորութիւն չունէր հնին վերադառնալ, ուստի նրան ուրիշ ոչինչ չէր մնում, քան միջոցներ որոնել, թէ ինչպէս կարելի կը լինի այդ սխալ քայլն ուղղել:

Այդ տեսակէտից նա անբաւարար էր համարում, որ փետրւարի 19-ից յետոյ, գիւղացիութիւնը վճարում էր պետական ուղղակի և անուղղակի հարկերի երեք քառորդ մասը: Նա անբաւարար էր համարում այն բոլոր միջոցները, որ գիւղացիներին տանում են դէպի քայքայումը, անանկութիւնը և քաղցամահութիւնը:

1887 թւին նա յայտարարից, որ այդ բոլորը ոչինչ են, որ 25 տարւայ ընթացքում «կառավարութիւնը ոչինչ լաւութիւն չի արել գիւղացիութեանը» (իր խօսքերն են) և պահանջեց մտցնել ու առանց առանձին դժւարութիւնների մտցրեց՝ զեմսկի նաչալնիկի ինստիտուտը:

Եթէ դուք ծանօթ էք Գօգոլի «Ռևիզօրում» նկարագրւած ոստիկանական տիպերի, կամ Թուրք հարկահաւաքի հետ, եթէ դուք դրանց զազրելութիւնը քառակուսի աստիճանի բարձրացնէք—այն ժամանակ կիմանաք թէ ինչ բան է զեմսկի նաչալնիկը:

Շնորհիւ Շիրինսկու դրանց իրաւասութիւնները այնքան ընդարձակւեցան ժամանակի ընթացքում, որ նրանք տէր դարձան ոչ միայն գիւղացիների հոգու և մարմնի, այլ և զեմստվօյին ինքնավարութիւնների և այլպիսի այլ հիմնարկութիւնների:

Այնքան շատ են նրա ծառայութիւնները, որ թւել չի կարելի: Պլէվէի ամենամտերիմ խորհրդականն էր, Վիտտէի ամենամօտիկ գործակիցը: Իսկ այժմ, երկրագործութեան մինիստրը, գիւղացիութեան տէրն ու տիրականը:

Ինչ պէտք է նա անէ: Ինչու համար այս կրիտիկական մոմենտին նա իշխանութեան է կոչւել իր պլեմիէրի հետ միասին: Ինչ էին ուզում դրանով արած լինել «շրջանները»:

Խեղդել ժողովրդի շարժումը, մեռելութեան թոյն ցանել նրա վրայ:

Ողորմելիներ… դրանք կարծում են, թէ «մեռեալ քարերը» կարող են կանգնեցնել ազատագրութեան յորդառատ գետը, որ հսկայ ժայռերն էլ քանդելով յառաջ պիտի ընթանայ—յաղթական և ամեն ինչ իր յորձանքներում կուլ տալով:

ԺՈՂՈՎՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Թէև բացւել է Պետական Դուման, թէև արդէն սկսել են ճառախօսութիւնները, բայց ժողովուրդը դեռ գոհ չէ և սպասում է իր պահանջների իրագործման: Նրա տրամադրութիւնը բարձր է և պահանջկոտ: Այդ տեսակէտից բնորոշ է ապրիլի 27-ին Պետերբուրգում տեղի ունեցած մի միտինգ, որի նկարագրութիւնը առաջ ենք բերում «Вѣкъ» թերթից:

—Դումայի շէնքի մօտ խռնւած հազարաւոր ամբոխը, լարւած ուշադրութեամբ լսում էր ամեն մի լուր, որ հասնում էր Պետական Դումայի խորհրդակցութեան դահլիճից:

Երբ պատգամաւորներն սկսեցին դուրս գալ պալատից, ամբոխը ղիմաւորեց նրանց ցնծութեան աղաղակներով և ցոյցեր արեց: Պատգամաւորների ամբոխին շնորհակալութիւն յայտնելուց, յետոյ կարճ միջոցում, հէնց նոյն տեղում կազմեց մի հսկայական միտինգ, բաղկացած մի քանի հազար մարդուց:

Բանւոր-պատգամաւորը յայտնեց, որ Դուման միաձայն նախագահ է ընտրել Ս. Ա. Մուրոմցեվին, որ նա վաղը կուղևորւի Ցարսկոե Սելօ թագաւորին յայտնելու Պետական Դումայի բացման մասին:

Առաջին ճառախօսից յետոյ սկսեցին խօսել և Դումայի միւս պատգամաւորները:

Ֆ. Ի. Ռօդիչեվը ի միջի այլոց ասաց. «Երբ մենք անցնում էինք բանտի մօտով, բանտարկեալները ծածանում էին թաշկինակները դէպի մեզ: Այժմ մենք պիտի աշխատենք և յաջողեցնենք, որպէսզի ազատ թողնեն ազատութեան մարտիկները, որոնց ջանքերով և զոհողութեամբ մենք այսօր հաւաքւած ենք այստեղ: Դուման իրաւունք չունի իր պարապմունքներն սկսելու, քանի դեռ չեն ստացել ազատութիւն նրանք, որոնք զոհեցին իրենց ժողովրդական ներկայացուցչութեան գաղափարի համար»:

Ուրալեան կոզակների պատգամաւորն ասաց.

Մոռացիր մեր՝ կոզակներիս մէջ ճնշեց մարդկային յատկութիւնները: Դուք, համայն ժողովուրդ Ռուսիայի, աջակցէք մեզ քաղաքացի դառնալու: Մենք մեր փառքը վաստակեցինք ոչ թէ Մանջուրիայում, այլ այստեղ, մեր հայրենիքում: Ուրեմն օգնեցէք մեզ, կոզակներիս, ազատւելու այդ փառքից:

Վեատկայի նահանգի գիւղացի—պատգամաւորն ասաց, որ գաւառական հեռու վայրերում էլ վաղուց և անհամբեր սպասում են, ծարաւի են ազատութեան, այնտեղ էլ տանջւած են և հասկանում են, որ առանց ազատութեան հողն էլ—ոչինչ է:

Կուրսկի գիւղացի—պատգամաւորն ասաց.

—Մեզ ուղարկեցին, որպէսզի մենք ձեռք բերենք հողը և ազատութիւնը: «Առանց հողի և առանց ազատութեան մի վերադառնաք», ասացին մեզ ուղարկողները: Կոստրոմայի նահանգի գիւղացի—պատգամաւորն իր կողմից ճառով կոչ արեց ժողովրդին բարոյական աջակցութիւն ցոյց տալ իրենց:

—Մենք Դումայում մի քանի հարիւր մարդ ենք, իսկ միմիայն Պետերբուրգում 100 հազար զօրք կայ: Առանց ժողովրդի համակրութեան և աջակցութեան մենք անզօր ենք:

Ամբոխը ցնծութեամբ ընդունում էր բոլոր

հառախօսների ատամները և միահամուռ կոչում.

«Ազատութիւն և ամնիստիա՛ Երկու կողմից վաղուց արդէն առաջացող ժանդարմները, վերջապէս մէջ մտան ամբոխին ցրւելու նպատակով։ Ամբոխը մի բոպէ տեղի տւեց ժանդարմներին, ցրւեց, բայց կրկին միացաւ։

Դումայի պատգամաւորներն սկսեցին համոզել ոստիկանութեան՝ բռնութեան չը դիմել և հեռացնել ժանդարմներին։

Ն. Ի. Կարէևը դարձաւ ամբոխին մի ճառով և խնդրեց ցրւել, դժբաղդ պատահարով օրը չը ստւերելու համար։

Ամբոխն, անմիջապէս խաղաղ կերպով ցրւեց։

Իսկ առանձին խմբերը դեռ երկար կանգնած էին Տաւրիկեան պալատին կից փողոցներում։

ԶԻՆՒՈՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Մեր կառավարութիւնը «անկարգութիւնների» առաջն առնելու համար մի միջոց ունի—զինւորական դրութիւն։

Եւ ապրիլի 27-ին, երբ Ռուսաստանում «անցի ունեցաւ ամենանշանաւոր անկարգութիւններից մէկը—Դուման բացւեց», կառավարութիւնը դրա առաջն առնելու համար, նրան զինւորական դրութեան մէջ յայտարարեց։

Անկարգութիւն սարքողներին աւելի նեղ պահելու համար, Դումայի անկիւններում, բոլոր սենեակներում, անցքերում, դահլիճներում, նոյն իսկ ննջարաններում, նշանակւած պատուէները լէյբ-գվարդիայի Սիմեօնովսկի գնդից են։

Այն գնդից, որը այնքան փառաւոր սխրագործութիւններ կատարեց Մօսկւայում դեկտեմբերի 12—24-ին։

Սխրագործութիւններ, որոնք մինչև անգամ կառավարութեամբ խանդացնելը հիացրին ամբողջ երկիրը՝ այնքան թափւած անմեղ արեան համար, այնքան անթիւ զոհերի համար,

Որոնք այդ լէյբ-գվարդիական գնդին, լէյբ-անփոխել գնդի դափնիներին արժանացրին։

Այժմ դրանք հսկում են «նոր անկարգութիւններ սարքողների» վրայ,

Որպէսզի հարկ եղած դէպքում շրջապատեն Դումայի անդամներին իրենց սւինների օղակով.

Երբ դրանք երկրին ձեռք կը կարկառեն միասին կռւելու համար.

Որովհետև պատգամաւորի... անձը—անձեռնմխելի է.

Եւ երբ ժողովուրդը ձեռնամուխ կը լինի նրա անձը իրեն հետ միացնելու՝ իրեն պահանջների թարգմանը դարձնելու՝

Սիմեօնովսկի գնդի զինւորները պիտի պաշտպանեն նրանց անձեռնմխելիութիւնը... ժողովրդից։

Իսկ եթէ պատգամաւորները բողոքեն դրա դէմ, շարունակեն իրենց սկսած անկարգութիւնը, ձգտեն դէպի ժողովուրդը, թարգման հանդիսանան նրա պահանջների և դէմ գնան բիւրօկրատիայի ցանկութեան,

Այն ժամանակ Սիմեօնովսկի գունդը, համաձայն զինւորական դրութեան օրէնքների, համաձայն իր «անցեալ ռազմական տրադիցիաներին», «ստիպւած պիտի լինի», իր սւինների արդէն ուղղել նրանց կրծքի դէմ։

Ահա թէ ինչու համար է Դուման զինւորական դրութեան մէջ դրւած...

† ՍԱՀԱԿ ՅՈՎՆԱՆԵԱՆ

Սուր անէծքի արժանի դաւադիրի ձեռքը բարձրացաւ մի երիտասարդ, լաւ կեանքի վրայ։

Ես ճանաչում էի նրան՝ այդ համեստ, ազնիւ և մաքուր մարդուն, այդ սրտաշահ, անկեղծ ընկերին, այդ տաքուն, նւիրւած գործիչին, ժողովրդի արեան և ոսկորի այդ իսկական մասնիկն. Նա շատ մօտ էր ժողովրդին, և ժողովրդի ցաւը իրեն ցաւն էր, և այդ էր պատճառը, որ ընկեր Սահակը միշտ մտահոգ էր, միշտ տխուր...

Իրեն հետ անձամբ ծանօթանալուց շատ առաջ ես լսել էի նրա մասին՝ ժողովրդից։ Վայոց-Ձորի լեռներում, թէ Սարդարապատի անապատներում, Շարուր-Նախիջևանի թէ Արաքսի գեղեցիկ դաշտերում ամեն տեղ լսում ես ժողովրդի բերանում ակնածութեամբ և յարգանքով իրենց սիրելի «վարժապետ Սահակի» անունը...

Նա թափառում էր ոտքով, ինչպէս մի աշուղ, և քարոզում ոգևորւած՝ յեղափոխութեան գաղափարը, կռիւ ամեն տեսակ բռնութիւնների և կեղեքումների դէմ, արդարութեան և եղբայրութեան խօսքը և լաւագոյն ապագան. Նա ոգևորւած հայի յարութեան գաղափարով՝ մոռացած իր անձնականը՝ մեռնել էր ժողովրդի հետ, քնում էր սարում ու չոլում, բաժանում էր նրա աղքատիկ սեղանը—և բազմաչարչար գիւղացիութիւնը նրան իրենն էր ընդունում, իր հարազատը, և նրան էր դիմում իր կարիքների համար։

Ցանկին հանգուցեալ Սահակ Յովհաննեանի Հ. Յ. Դաշնակցութիւնը կորցրեց մի անկեղծ և մաքուր գործիչի, որ ամբողջ տասը տարի գործում էր և չէր յոգնում։

Աւ. Իսահակեանց

ՊԷՏՔ Է ՎԵՐԱՑՆԵԼ

Թիֆլիսում զինւորական դրութիւն է։

Աջ ես նայում սւիններ, ձախ ես նայում սւիններ։

Կօզակներ, դրագուններ, հետևակ հրացանաձիգներ, զինւած ոստիկաններ...

Այս քաղաքից էլ ապահով, այս քաղաքից էլ երջանիկ տեղ մի՞թէ կարող է լինել—անշուշտ կը մտածէ նոր եկած «խամ» մարդը։ Դանակդ բաց քնիր։ Այդքան սւինների, այդքան ամեն տեսակ «զէնքերի», զօրականների ներկայութեամբ մի՞թէ կարող են երևալ գողեր, աւազակներ, մարդասպաններ...

—

Բայց՝—մայիսի 1-ին Դիդուբէում, պրոլետարական այդ թաղում, որի վրայ բաւական խիստ հսկողութիւն կայ,—3 զինւած աւազակներ մտնում են էլեկտրաքարշի վարման Լիգոզվիկ Կուամբերկի տունը, կապոտում նրա կնոջը, որ մենակ է լինում տանը, բերանը թաշկինակով պինդ փակում, վայր գցում և իրենք հանգիստ խուզարկում են տունը, հաւաքում եղած պատրաստի դրամը և... հանգիստ, ապահով գնում։

Անցեալ օրը, մայիսի 3-ին, Միքի փողոցում, ցերեկւայ ժամը 1—2-ի ժամանակները, անյայտ սպանիչներ դանակը խրում են արհեստաւորաց դպրոցի ուսուցիչ Ա. Բաթաշեանի կուրծքը, տեղն ու տեղը գլորում նրան։

Կրկին անցեալ գիշեր, մայիսի լոյս 3-ի գիշերը, Էկզարխի հրապարակի վրայ խփեցին սպանեցին մի վրացի երիտասարդի։ Ասում են, որ սպանւածը տեղական սօցիալ-դեմօկրատների մէջ յայտնի գործիչ է եղել։

Լրագիրները միաբերան հաղորդեցին Մեթեխի բանտից գրաւականով նոր արձակւած երկու վրացի պատւաւոր բանտորների՝ գլխին եկածը։ Դուռը կիսաբաց է. Նրանք նստած են պատշգամբում։ Դրան բացւածքից ոճրագործ ձեռքը խփում է, մէկին վիրաւորում միւսին սպանում։

—

Իսկ զօրքերը շրջում են, սւինները պլպլտում, զինւորական դրութիւնը ծանր քարի նման ճնշում է բոլոր քաղաքացիներին։ Փողոցներում ամեն մարդ մշտապէս խուզարկման վտանգի մէջ է։

Ոչ ոք զէնք կրելու իրաւունք չունի։

Դա ամենքին յայտնի է։

Ոչ ոքի մօտ զէնք չը կայ։ Եւ աւազակները դառնում են աւելի յանդուգն, աւելի լկտի։

Պատրուլը գալիս անցնում է, իսկ նրա ետևից, հազիւ մի քանի քայլ հեռացած,—«տրռմփկ»—խփում են, կամ դանակն են կուրծքը խրում...

Դոնէ մարդիկ եթէ զէնք կրելու իրաւունք ունենան, գողերն ու մարդասպաններն այդքան յանդուգն չեն կարող լինել։

Եւ այսպէս կարելի է հաշւել ու դասել անվերջ։

Ուրեմն։

Ուրեմն՝ պիտի վերացնել զինւորական դրութիւնը։ Սւիններ չեն հարկաւոր, այլ կարգ ու կանոն։ Իսկ դրանք չեն տրւում բռնութիւններով ու շղթաներով, այլ հասարակական տանելի կարգերով։ Զինւորական դրութիւնը խեղդում է ամեն ինչ. Նա նպաստում է գողութիւններին, սպանութիւններին, յանդուգն թալաններին։

Պէտք է, այո, պէտք է վերացնել զինւորական դրութիւնը։

Գասպար

ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Թիֆլիս։ Առայժմ յայտնի է Թիֆլիսի 7-րդ քաղաքամասի ընտրութիւնների համար նշանակւած յանձնաժողովի կազմը։ Թիֆլիսի քաղաքագլխի կողմից այդ կազմի համար նշանակւած են հետևեալ անձինք՝ Ս. Զ. Միրզոյեան, Ս. Մ. Նուռնուֆարեան, Դ. Ց. Ջիջաւաձէ, Ի. Ի. Իվանով, Ի. Ս. Իգիթեան, Պ. Ի. Կազանցև, Դ. Դ. Մուրադեան, Պ. Զ. Նասիձէ, Վ. Ա. Վարդանեան, Ս. Ա. Բարսեղեան, Պ. Գ. Մամրաձէ, Խ. Գ. Մանգալով, Պ. Ֆ. Սուրգուլաձէ և Ա. Ս. Ապրեամով։

—Թիֆլիսի 10-րդ քաղաքամասում ընտրողների թիւն արդէն որոշ է. ընտրողները համարւում են 6552 հոգի, որոնք ընտրելու են 12 լիազօր։

Գօրի։ Քաղաքից ընտրելու են 2 լիազօր Նահանգական ընտրութեանը մասնակցելու համար։ Կուսակցութիւններից իւրաքանչիւրն աշխատում է ազատացնել ժողի իր թեկնածուների շուրջը։ Ընտրութիւնները նշանակւած են մայիսի 5-ին։ Սահմ. ռամկ. կուսակցութեան թեկնածու համարւում է Լազարեան ճեմարանի արևելեան լեզուների ուսուցիչ պրոֆ. Ա. Ս. Խախանով։ Ֆեդերալիստների և ազատ սօցիալիստների խումբը դրել է Շ. Ջիտաձէ—ազնւականների գիմնազիայի տեսչի և Ն. Լօմոուրի-ամինաարեայի ուսուցչի թեկնածութիւնը։

Իսկ սօց-դեմօկրատները թեկնածուներ համարւում են Բ. Դ. Մէլիքեշվիլին, Մօսկւայի համալսարանի մի ուսանող և Վ. Խախանաշվիլին։

Քութայիս։ Քութայիսի ամբողջ նահանգում ընտրութիւնները վաղուց վերջացած են. Մնում է միայն քաղաքի ընտրութիւնը, որը նշանակւած է մայիսի 9-ին։ Քութայիս նահանգի գաւառական ընտրութիւնները հետևեալ արդիւնքն են տւել. ընտրւած են 41 հոգի, որոնցից 17 հոգին պատկանում են սօց. ֆեդերալիստ կուսակցութեան, 17 հոգի սօց. դեմօկրատներին, 4 հոգի կադէտներին և 3 հոգի անկուսակցականներ։

Ղուբա։ Քաղաքային ընտրութիւնները նշանակւած են մայիսի 11-ին։ Նշանակւած օրը, առաւօտեան ժամը 9-ին բոլոր ընտրողները պարտաւոր են ներկայանալ ընտրութիւնների համար յատուկ յանձնաժողովին. Ներկայացնելով յայտարարութիւնը և որպէս ընտրող լինելու վաւերաթուղթը։

Այն անձինք, որոնք չեն ներկայացնի այդ յայտարարութիւնը, նրանք պարտաւոր են գոնէ ներկայացնելու վկայագիր իրենց անձի ով լինելու մասին, ոստիկանատան կամ ուրիշ հիմնարկութեան կողմից վաւերացրած։

Շուլավէր. — «Կալւածատէրերի գաւառի լիազօրների ընտրութեանը 205 ընտրողներից ներկայ էին միայն 40 հոգի։ Ձայների բացարձակ մեծամասնութեամբ լիազօր է ընտրւած Վ. Մեհրաբեանը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱԽՏԵՐԻՑ

I

Վաղուց է, որ այդ «շնաշխարհիկ» դպրոցն ալեկոծւում է, քայքայւում է ներքին հիւանդութիւններից ու ախտերից. վաղուց է, ինչ դպրոցի հոգևոր վարչութիւնը զանազան փրկարար միջոցների է դիմում նորմալ (ըստ վանական հասկացողութեան) դրութիւն պահպանելու ուսանող երիտասարդութեան մէջ։

Այս տասը տարւայ ընթացքում քրօնիքական է դարձել մանաւանդ մի արմատական փրկարար միջոց—արտաքսել ըմբոստ աշակերտներին։ Եղել են դէպքեր, երբ արտաքսել են խմբերով (մէկ անգամ 83 հոգի). Հոգևորականութիւնն այդ դէպքերում իր ամօթալեր եռանդով գրաւել է հասարակութեան առանձին ուշադրութիւնը։ Մամուլը խարազանել է սրբանց, բողոքել է, բայց հոգևոր հայրերը ունենալով որոշ ինքնուրոյն հայեացք իրենց իրաւունքների վրայ, իրենց բոլորովին անկախ են զգացել և շարունակել են այդ գործունէութիւնը։

Այս տարի ճեմարանում տեղի ունեցած փոթորիկները, տպեց երևոյթները արժանի են առանձին ուշադրութեան։ Այդ երևոյթների անմիջական աղբիւրը փնտրելու է ինձ կարծէ այն արտաքին օրինակի պայմանների մէջ, որ ստեղծել է ճեմարանում հոգևոր վարչութիւնը։

Եթէ ես ցանկանայի կանգ առնել ճեմարանի տնտեսական կեանքի վրայ, ստիպւած պէտք է լինէի տալ բաւական տխուր նկարագրութիւններ առողջապահական այն պայմանների մասին, որ տիրում է դպրոցում և որի հետևանքները անկարելի է թաքցնել։ Ես կասէի որ աշակերտութեան մի հսկայական տոկոսը միշտ հիւանդ է լինում, շնորհիւ վատ սնունդի, ցուրտ բնակարանների, անմաքրութեան և այլն։

Ցայտնի է, որ ճեմարանի մօտաւորապէս 250 աշակերտներից միշտ հիւանդ է լինում մինչև 20 հոգի։ Ցայտնի է, որ այդ հարիւրաւոր գիշերօթիկների ննջարանները, բացի չափազանց քիչ լինելուց, ցուրտ էլ են, ցուրտ են լինում և դասարանները։ Հետաքրքիր է մանաւանդ, որ տօն օրերին բոլորովին չեն տաքացնում (երևի այն պատճառով, որ ուսուցիչները և «հայրերը» չեն լինում այնտեղ)։

Բայց այդ հարցի վրայ ես չեմ ուզում երկար կանգ առնել. երևի նիւթական միջոցները այնքան սուղ են, որ անկարելի է լինում առողջապահական պայմաններ ստեղծել և՛ «հայրերի», և՛ «աւակների» համար, մանաւանդ որ վերջինները «ձրիակեր» են և «ապերախտ»։

Դիսցիպլինան հնազարեան է դեռ։ Բացի նրանից, որ յաճախ գործ է ածւում ծեծ «կերթական նպատակներով», կայ և այլ դուռ «ճեմարանական» միջոցներ ընկճելու աշակերտի հպարտութիւնը և ինքնասիրութիւնը, օր. ընկերների առաջ սեղանատանը կանգնացնել ճաշի կամ թէյի ժամանակ, որ գործադրւում է ամեն մի չնչին դէպքի համար։

Իսկ ինչ վերաբերում է հայհոյանքներին, դա արդէն անցել է գեղարւեստի, բանաստեղծութեան աշխարհը...

Մէկը կրթում է մանուկ սերունդը հոչակաւոր Կրիլօվի նման այլաբանութիւններով, համեմատելով երեխային զանազան գազանների հետ և պատուելով գլխաւորապէս էշերի շուրջը։

Մի ուրիշը իր բոլոր դասախօսութիւններն սկսելով և վերջացնելով «իդիօտներ» փաղաքշական խօսքով, սիրում է նաև դիմել դուռ ժողովրդական էպոսին՝ ործնելով հարազատ հայկական «արարատեան» դարձւածներ. «վայրենի», «անտառից բերած», «տօ երեսդ բրդի ջրով է լւացած» և այլն։

Ուսուցիչները և «հայրերը» շատ սիրում են յիշեցնել աշակերտներին, որ նրանց պահում են ձրի, որ «փողոցում շատ կան իրենց նմանները», որ «ժողովուրդը ոչ մի կոպէկ չի ծախսում (՞) և աշակերտներով չի էլ հետաքրքրւում»։

Ուսուցիչների և աշակերտների մէջ չը կայ մտերմութիւն, ընդհակառակը կասկածանքով են վերաբերւում և նայում միմեանց։

Դպրոցի վարչութիւնը միշտ աշխատում է օգտւել աշակերտների մէջ եղած անհամաձայնութիւններից, ներքին երկպառակութիւններից և յաջողում է աշակերտների գաղանիքները երևան հանել, մանաւանդ երբ կարելի է զգացւում աշակերտների հաւաքական արտայայտութիւնները քանդել. այդ դէպքում նա կանգ չի առնում ոչ մի միջոցի առաջ և լրտեսներ է գտնում և գործակալներ։

Այսպիսի վերաբերմունքով առելութիւն զարթեցնել աշակերտների մէջ դէպի ուսուցիչները, ամեն տեսակ միջոցներով շահագործել արանց երիտասարդական անփորձութիւնը, վիրաւորել նրանց ինքնասիրութիւնը—արանք «հոգևոր» մանկավարժութեան յատկանիշներն են։

Վերցնենք սեպտեմբերի դէպքը. աշակերտները պահանջում են հեռացնել մի վարդապետ դասախօսի, սկզբունքօրէն, անկախ վերջինիս անձնաւորութիւնից և այս առթիւ մի քանի անգամ չեն գնում դասի. փոքրերից մի քանիսն էլ վարդապետի յետևից շաչցնում են։ Ուսուցչական խումբը պահանջում է զղջալու ներողութիւն։ Տեսուչը ստիպում է, սպառնալով հակառակ դէպքում արտաքսել։ Աշակերտները՝ բացի հինգ հոգուց ստորագրում են այդ թուղթը, յայտնելով, որ ակամայից են վիրաւորել ուսուցիչներին։

Բայց «հայր» տեսուչը այլ բնաւորութիւն է տալիս այս դէպքին և յայտարարում է, որ աշակերտները ներողութիւն են խնդրում իրենց բոլոր ըմբոստ պահանջների առթիւ և հինգ հոգու, որ չեն «զղջում», կաթողիկոսի կոնդակով հեռացնել է տալիս։ Ճեմարանի տօնի օրը, որ միշտ ուրախութեան և հանդիսի օր է եղել աշակերտների համար, հանդիսաւոր կերպով կարդացւում է կաթողիկոսի կոնդակը։ Թափւում են զգալի չափով կոկորդիլոսի արցունքներ...

Դուրս վռնդել աշակերտներին ամեն մի չնչին դէպքի համար, գտնել անելանելի դրութեան մէջ—սա ճեմարանի կրթական մեթօդն է աշակերտներին համեստութեան սահմաններում պահելու համար։

Մի այլ դէպք. Տէր-Ղազարեան Միսակ արտաքսւում է նրա համար, որ կասկածում է իր ընկերոջը լրտեսութեան մէջ տեսչի վերաբերմամբ։ «Հայրը» առանց խղճահարւելու արտաքսում է «որդի» Տէր-Ղազարեանին։ Վերջինս տուն ու ապաստան չունենալու պատճառով, ամբողջ 3-4 ամիս բնակւում է Ղազարապատում իր ընկերների օգնութեամբ։ Տղայի դրութիւնը ծանր է լինում։ Թիֆլիսում չեն ընդունում Ներսիսեան դպրոցը, դիմում են կաթողիկոսին,—հրամայում է վերստին ընդունել, բայց հրամանը չի կատարւում և տղան վերջը հեռանում է։

Մի քանի շաբաթ սրանից առաջ (Զատկի տօներին), արտաքսել են դարձեալ 4 հոգի. պատճառն անյայտ է։ Կոստանեանի ժամանակ արտաքսելը շատ հեշտ էր, և կատարւում էր ադմինիստրատիւ կերպով. դասի ժամանակ աշակերտին դուրս էին կանչում և հրամայում մինչև դասի վերջանալը անյայտանալ ճեմարանից։ Պատճառները յայտնելու սովորութիւն չը կար։ Այժմ հանգամանքները փոխւել են,

ԹԵՐԹՕՆ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի։ Ռեազանի նահանգի պատգամաւոր իշխան Վոլկոնսկի հաւատ չէ տածում դէպի քառանդամ ֆօրմուլան և այդ իսկ պատճառով համամիտ է մանուածողովի խմբագրած բանաձևի հետ։

Սիմբիրսկի պատգամաւոր Ալադին յայտարարում է, որ ինքը թէև քառանդամ ֆօրմուլայի կողմնակից է, ինչին ապացոյց կարող է ծառայել իր ամբողջ անցեալը, բայց հաւատալով, որ Դումայի մեծամասնութիւնը պատկանում է ժողովրդական ազատութեան կուսակցութեան և որ այդ մեծամասնութիւնը խակապէս կը մտցնի օրինագիծ ընտրական իրաւունքի մասին նոյն այդ ֆօրմուլայի վրայ հիմնւած՝ այդ պատճառով նա ձայն է տալիս մանուածողովի խմբագրած բանաձևին (ծափահարութիւններ)։ Նախագահը երկու փոփոխութիւններն էլ դնում է քւէարկութեան։ Միաձայն մերժւում։ Ապա ուղղերձի առաջին կէտը գրեթէ միաձայն ընդունւում է։

Ժամը 10 և 20 րոպէին սկսւում է երկրորդ կէտի քննութիւնը։ Դումայի անդամ Լօկօտ այդ կէտի վերաբերմամբ առաջարկում է մտցնել մի ռճարտնական փոփոխութիւն։ Դուման մերժում է այդ առաջարկը և մանուածողովի խմբագրած այդ կէտի լինողբրն ևս լիովին հաստատում է։

Երրորդ կէտը սկսւում է այսպէս. «երկիրը գիտակցում է» և վերջում ասւած է «ռուս ժողովուրդը այդ լուրը կենդանի հիացմունքի միահամուռ աղաղակով»։ Պրոֆեսոր Կարէևի առաջարկութեամբ այս կէտից դուրս հանւեց «ռուս» խօսքը։ Կարէևը իր պահանջը պատճառաբանում է նրանով, որ ոչ միայն ռուս ժողովուրդին, այլև Ռուսաստանում ապրող բոլոր ժողովուրդներին հոկտեմբերի 17-ի մանիֆեստի լուրը ուրախութիւն պատճառեց։

Միւս լրացումները, որոնց մէկը և այն, որը աւելի ևս ուժեղացնում է «չինովնիկների ինքնիշխանութիւն» դարձւածը՝ չընդունւեցին։

Ուղղերձի յետագայ մասը քննելիս Ստախովիչը իր երկար ճառում ապացուցանում է, որ անհնարին է մինիստրներին պատասխանատու դարձնել Դումայի առջև։ Ստախովիչին առարկեց Կօվալևսկին, որը հաստատում էր, թէ լիակատար հնարաւորութիւն կայ այնպիսի պատասխանատւութիւն հաստատել, որպիսին գոյութիւն ունի Անգլիայում, ուր դեռ 17-րդ դարում մի քանի մինիստրների մահւան պատժի դատապարտեցին։ Ապա Դուման մերժում է Ստախովիչի լրացումը և ուղղերձի չորրորդ կէտն ընդունում է։ Գիշերւայ ժամը 12-ին և 15 րոպէին նիստն ընդհատւում է մինչև մայիս 4-ի առաւօտեան ժամը 11-ը։

Առաւօտեան ժամը 11 և կէսին նիստը բացւում է։ Ուղղերձի յօդւած առ յօդւած քննութիւնը շարունակւում է։ Դումայի անդամներին բաժանում են ռամկավար-սահմանադրականների կուսակցութեան կողմից մշակւած ընտրողական իրաւունքի օրինագիծը և մանուածողովի գեկուցումը լիազօրութիւնները ստուգելու կանոնների մասին։ Այնուհետև Նաբօկովը կարդում է ուղղերձի այն կէտը, որը սկսւում է «բայց ամենից առաջ Ռուսաստանը ազատել» և վերջանում է «չինովնիկների ինքնիշխանութիւնը» խօսքերով։

Գրօդնայի պատգամաւոր Ծակուբսօն առաջարկում է մտցնել և այն, որ հարկաւոր է վերջ տալ բացառիկ դատաստաններին, ի միջի այլոց յիշատակում է իր ստացած հեռագրի մասին, որում ասւած է, որ ոստիկանական պահակներին սպանողները ենթարկւում են զինւորական դատաստանի։ Կիևի պատգամաւոր Ծօյց առաջարկում է կէտ մտցնել և ժանդարմների զօրամասի վարչութիւնը վերացնելու մասին։ Երկու լրացումների դէմ ես Նաբօկով առարկում է, բացառիկ դատաստանների գոյութիւնը կապւած է ուժեղացրած պահպանութեան դրութեան հետ, այն ինչ վերջինիս վերացման մասին արդէն յիշւած է ուղղերձում, իսկ ժանդարմների վարչութեան վերացման խնդիրը մի մանրամասնութիւն է, որի լուծումը կախւած կը լինի ներքին գործերի բարենորոգւած մինիստրութիւնից։ Հարցը դրւում է քւէարկութեան։ Երկու լրացումներն էլ մերժւում են։ Ուղղերձի այս կէտն ևս ընդունւում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մայիսի։ Պետական Դումա։ Նաբօկովը կարդում է հետևեալ կէտը, որը սկսւում է «կառավարութեան պատասխանատւութեան սկզբունքի արմատանալու հետ միասին» խօսքերով և վերջանում է «ժողովրդական ներկայացուցչութեան օրէնսդրական կոմպետենցիայի սահմանը որոշելու» խօսքերով։ Նախագահը յայտարարում է, որ Կօվալևսկին փոփոխութիւն է մտցրել Պետական խորհրդի մասին առաջարկւած բանաձևի մէջ, որն արդէն յայտնել էր յանձնաժողովի փոքրամասնութեան կողմից. այդ փոփոխութիւնը յայտնում է թէ անհրաժեշտ է ուղղերձից դուրս գցել Պետական խորհրդի կազմի մասին եղած նախադասութիւնները։

Կոմս Գէյդէնը յիշեցնում է, որ ինքը առաջարկել է մի փոփոխութիւն, որը այդ կէտին ամբողջովին նոր գոյն է տալիս. դա կայանում է նրանում, որպէսզի Դուման կայսեր առաջ խնդրամատոյց լինի Պետական խորհրդի հիմնարկութեան վերաքննութեան իրաւունքի նախաձեռնութիւնը իրեն, Դումային տալու մասին։

Նաբոկովը նոյնպէս իր կողմից մի նոր փոփոխութիւն է առաջարկում, որը կայանում է նրանում, որ այն բոլորը, ինչ որ ուղղերձում ասւած է Պետական խորհրդի մասին պէտք է դուրս ձգել, որովհետև դա հաւասար է խորհուրդը ոչնչացնելու պահանջին, մինչդեռ խորհուրդը ոչ թէ մի պատնէշ է Դումայի առաջ դրւած, այլ նրա ընկերն է, և ինչպէս լաւում է, նոյն իսկ, պարտաւոր է նրա հետ միասին գործել, նրա հետ միասին ձեռք ձեռքի տւած գնալ։

Նակուշինը սահմ.-ռամկավար կուսակցութեան անունից պաշտպանում և ջատագովում է յանձնաժողովի առաջարկած խմբագրութիւնը։

Իշխան Տախաւվակօյը յայտնում է, որ հարցը այստեղ ոչ թէ երկպալատեան սիստեմի մէջն է,—մի հարց, որը չի կարող վճռւել ներկայ Դումայի իրաւասութեամբ և որը պիտի վճռւի ապագայ, ընդհանուր ձայնատւութեամբ ընտրւած Դումայի միջոցով,—այլ Պետական խորհրդի ներկայ կազմի մէջ, այդ պատճառով և իշխան Տախաւվակօյը պաշտպանում է յանձնաժողովի առաջարկած նախագիծը։

Իշխան Վօլկօնսկին գտնում է, որ անժամանակ է դեռ ցուցումներ անել խորհրդի թերութիւնների վրայ։ Այդ կէտի անորոշութիւնը թիւրիմացութիւնների առիթ կարող է տալ. կարելի կը լինի այդ կէտի հիման վրայ կարծել, որ Դուման դէմ է երկպալատեան սիստեմին, ուստի ամենից լաւն է նրան բոլորովին դուրս ձգելը։

Պատգամաւոր Ջաբօլօտնին պաշտպանում է մի պալատեան սիստեմը. Նրա կարծիքով Պետական խորհուրդը և առհասարակ ամեն մի վերին պալատը, մի մի մեռեալ հիմնարկութիւններ են, որոնց ոչինչ ջանք չէ կարող կեանք ներշնչել։ Նա դէմ է ամեն մի փոփոխման և խնդրում է Դումայից ընդունել ուղղերձի բնագիրը։

Իշխան Դօլգօրուկօվն արտայայտեց այն միտքը, թէ Պետական խորհուրդը միմիայն մի խորհրդակցական հիմնարկութիւն պիտի լինի, այն ձևով, ինչ ձևով որ առաջարկում էր այդ, դեռ մօտ 100 տարի առաջ Սպերանսկին։ Այնուհետև նա սկսեց ապացուցանել թէ անհրաժեշտ է, ինչ որ լինի, խուսափել կօնֆլիկտից, և յայտնել Թագաւորին, որ նրա և Դումայի մէջ չը պիտի պատնէշներ լինեն։

Կարճ ընդմիջումից յետոյ, երբ նիստը վերբացւեց, Դուման, Ուլիշենկօ (Չերնիգօվի նահանգ) պատգամաւորի առաջարկութեամբ միաձայն որոշեց չընդհատել նիստը մինչև որ դահական ճառի պատասխանի քննութիւնը չը վերջանայ։

Դուման զբաղւած է հողային հարցով, որը քննւում է ուղերձ պատասխանի հետ միասին։

Հողային նախագծի մէջ առաջարկւող փոփոխութիւնները, որոնք առաջարկւեցան կայանում են նրանում, որ նախ պէտք է գիւղացիութիւն բառը փոխել «հողագործներ» բառով, որովհետև գիւղացիութիւնը կը դադարէ գոյութիւն ունենալ որպէս մի առանձին դաս (сословіе), յետոյ հարկաւոր է բնագրի նախագծին աւելացնել, որ գիւղացիների հողային կարիքին պէտք է գոհացում տալ տեղական ազգաբնակութեան պահանջների և ցանկութիւնների համաձայն միայն, և, վերջապէս, մի նոր փոփոխութիւնով էլ առաջարկւում է յիշատակել ուղղերձի մէջ այն հսկայական ժողովրդական աղքատութեան և սովի մասին, որն այժմս տիրում է Ռուսաստանում։

Ռեազանի պատգամաւոր Վասսիլևը առաջարկում է մի նոր աւելացում-փոփոխութիւն մտցնել ուղղերձի բնագրի մէջ, որպէսզի այս տարի հարկերը չը հաւաքեն, իսկ չը վճարւած պարտքերը—ներեն։

«խրատակարգ» է հաստատել, բայց զուտ Վիտտէական: Ամէն ինչ իբր թէ պատճառաբանւում է, քննւում է և մանաւանդ այնպէս է լինում, որ դժբաղդութիւնը տեղի է ունենում ցանկութիւնից անկախ: Օրինակ, կարելի է երկուսներ շարել և յայտնել, որ «հարակդ անցել է, յարմար չէ մնալ երկրորդ տարի»:

Այժմ գոյութիւն ունի մի այլ պայման ընդունելու և արտաքսելու համար. սովորութիւն կայ ղեկավարւել խնամիական—բարեկամական յարաբերութիւններով. առհասարակ պրոտէկցիա կոչուած բանը մեծ դեր է խաղում: Օրինակ, անցեալ տարի 4-րդ դասարանից մի քանի աշակերտներ դուրս եկան, բայց աշնանը դարձեալ խնդիրք էին ներկայացրել ընդունելու ճեմարանում.—ընդունել է միայն մէկը (վարդապետի եղբայր)—մնացածներին մերժել են կարծեմ ճեմարանում տեղ չը լինելու պատճառով. բայց յետոյ մի դասախօսակի պրոտէկցիայով ընդունել է մի տղայ, առանց քննութեան և... ճեմարանում «տեղ» գտնել է...

Ա. Շահխաթունեան

ԱՌԱՆՑ ԱԶԳԻ ԽՏՐՈՒԹԵԱՆ

Բալախանի, ապրիլի 20-ին

Քանի օրեր լրագրութեան նիւթ չինեցին Բագուի գործարանային շրջանում սովորական մի երևոյթ:

Դա բանւորի ազգի խտրութեան հարցն է, որը ծագում է աւելի օտարազգի մի քանի կառավարիչներից: Դա բացառապէս հայ բանւորի վրայ են գործադրել:

Այն ժամանակները Բագւում միակ թերթը «Каспій»-ն էր, որ ոչ մի բան չէր գրում դրա դէմ. անպաշտպան հայ բանւորները, ճարը կտրած, դիմում են հազար ու մի տեսակ միջոցների, որպէսզի կարողանան մտնել մի լաւ ֆիրմա: Օր՝. «Նոբելում» ընդունւելու համար առաջ պէտք էր Староста-ին կաշառել և մի քանի ազդեցիկ արհեստաւորների գինետնում հիւրասիրել և հազար ու մի խոստումներ տալ, իսկ նրանք ինչ պիտի անէին. միայն պիտի բարեխօսէին, կամ «Մաստերը» կըդունէր կամ քիֆը տեղը չէր լինի կը մերժէր:

Խեղճ հայ բանւորը հէնց որ յաջողւում է, Նոբելն է մտնում կարծէք թէ ինքը Նոբելն է դառել, այնքան է ուրախանում. երևակայեցէք ինչքան շատ պիտի աշխատած լինի, որ այդպէս ուրախանայ այդ խղճուկ յաջողութիւնից:

Անգլիական, ռուսական, թուրքական ֆիրմանները, դրանք չինական պատեր են հայ բանւորի համար: Եւ այդ բոլորը իմանալով թուրք լրագիրը, *) իրաւունք է համարում առանց մի փաստի ձայնը աշխարհով մին անել—թէ հայ ֆիրմաններում թուրքերին հեռացնում են, տեղը հայ վերցնում:

Ես հարց եմ տալիս մեր հարևան թուրքերին: Ո՞ր թուրք ֆիրման մի հայ «բուրօվօյ մաստեր» ունի. ոչ մէկը:

Ի՞նչու համար.—որովհետև թուրք բուրօվօյ մաստերները և առհասարակ «բուրօվօյներում» աշխատող թուրք բանւորները շատ են, այդ պատճառով էլ համարեա առանց բացառութեան թուրքեր են պահում:

Իսկ եթէ թուրք. սլեսար, տօկար, ժելօնչիկ և այլն գտնէին ես համոզուած եմ, որ ոչ թէ հայ այլ և ոչ մի ռուս չէին պահի իրենց ֆիրմաններում: Զարմանալին այն է, որ «Каспій»-ի գանգատուած ֆիրման «Կասպիական ընկ.»-ն է, որը իրենց ծառայողների տուած հաշուով՝ քանակութեան առաջի տեղը բռնում են թուրքերը:

Մի թարմ փաստ: Այդ միևնոյն «Կասպի» ընկերութիւնից արձակուած մի հայ դարբին (որի անունը Թաթէոս Օսէփեան) դիմել է «Вотанъ» ընկ. գործարանի մեխանիկին, վերջինս ընդունել է կարծելով, թէ վրացի է, բայց մինչև գործ տալը իմացել է որ հայ է, առանց քաշւելու ասել է.—այստեղ հայերին չեն ընդունում, գնացէք:

Պարզ է, որ եթէ հայ ֆիրմայում այդպէս վարւէին մի թուրքի կամ մի ռուսի հետ, ինչպէս դէպքը ահագին աղմուկ կը բարձրացնէր:

Սակայն հայ բանւորները համբերատարութեամբ տանում են այդպիսի դրութիւնը և դեռ կան մարդիկ, որ աշխատում են հակառակը պնդել:

Ինչ էլ որ լինի, ժամանակ է վերջ տալ «ազգային» խտրութեանը և ամենքի վրայ էլ նայել իբրև մարդու, աշխատաւորի:

Թող ամեն մի գիտակից մարդ ղեկավարւի ոչ թէ նեղ ազգային, այլ համերաշխութեան ու արդարութեան գաղափարներով:

Այդ է պահանջում ընդհանուրի և մանաւանդ աշխատաւոր դասակարգի շահերը:

Ա. Տ. Մ.

*) Խօսքս «Կասպի» (Каспій) լրագրի մասին է:

ԼՐԱՏՈՒ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 4 մայիսի 1 ժ. 18 ր.

Ուղղերձ—պատասխանն ընդունուած է: Խմբագրող կոմիսիայի կողմից յաւելուածներ է արուած բանակի վերակազմութեան մասին:

Գիշերւայ ժամ 1-ին Նախարարին հարց է տրւած ոստիկանական դեպարտամենտի կողմից կազմւած ջարդերի մասին: Հարցի քննութիւնը յետաձգւած է առաւօտեան ժողովին:

Գանձակ, մայիսի 2-ին

Մեր հարևան թուրքերը, ինչպէս երևում է, հանգիստ ապրելու մտադրութիւն չունեն: Կօզակների ու զեկցութեամբ «զինուած» բարձրանալով սարերը, նրանք այնքան են երես առել, որ էլ բանի տեղ չեն դնում հայերին բառիս բուն մտքով: Նրան իրենց դրութեան կատարեալ տէրն են համարում, անպայման անպատիժ են զգում իրենց ու համոզուած են, որ հայի վերաբերմամբ ամեն բան իրենց թոյլատրելի է: Արածացնում են (այդպիսի մի քանի դէպքեր պատահել են արդէն) հայերի արտերն ու խոտհարքները, հայ գիւղերի մօտիկ շրջականներից տաւար են քշում, քանի որ լաւ գիտեն, որ հայ գիւղացիները ահաբեկւած գիւղերի ռմբակոծութիւնից ու կօզակների արշաւանքից, «կանանց բռնաբարումից» մանաւանդ, պատրաստ են ամեն բան զոհել, միայն թէ իրենց «օջախի սրբութիւնը լինի փրկած, գիտեն, որ հայերի ձեռքերն ու ոտքերը կապած են, հետևաբար թուրքերի ձեռքին սարուկ են համարեա: Ապրիլի 26-ին Բանանցի շրջակայքից տարել են հինգ եզ, 29-ին Խաչակապ հայ գիւղի մօտից քշել են 12 գլուխ տաւար, 30-ին բալլըլեցի թուրքերը սպանել են Զովլառ գիւղացի մի հայ տաւարածի աղբիւրից կռացած ջուր խմելիս. մայիսի 1-ին Հաջի-քենդի մօտ թուրք հրոսակները յարձակւում են ֆուրգօնով քաղաք եկող հայ գիւղացիների վրայ ու սպանում նրանցից երկուսին, մնացածները ազատւում են փախուստով: Դրութիւնը անտանելի է, այսպէս ապրել, այսպիսի սոսկալի անարդարութեան հետ հաշտւել չէ կարելի. քարէ համբերութիւնն անգամ կը պայթէ: Թուրքը, իր վրայ կրելով «քոչւորի» խորհրդաւոր անունը, շրջում է «զինուած», իսկ հայ գիւղացուց զէնքը խլում են, իրեն բանտարկում, իսկ գիւղին սպառնում ռմբակոծութեամբ ու կօզակներով...

Իղրաշի

Բալախանի, 3 մայիսի

Երէկ երեկոյեան, ժամի 10-ին, Կասպեան ընկ. Չրմուղի կառավարիչ՝ Եակօվլևը, կայարանից կառք նստելով իր բնակարանը գնալիս, դեռ չը հասած ռուսաց եկեղեցուն՝ անյայտ չարագործի գնդակով վիրաւորւում է ծանր կերպով: Վիրաւորին փոխադրում են հիւանդանոց, որտեղ և այսօր ժամի 1-ին մեռաւ: Հանգուցեալը Բալախանու կառավարիչների մէջ յայտնի էր որպէս ազատամիտ և անաչառ (ազգով ռուս) մարդ. նա կանդիդատ էր Պետական Դումայի համար Բագուից: Մանրամասնութիւնները յետոյ:

Ալ. Ար.

Կուսապատ (Ջիւանշիրի գաւ.), 26 ապրիլի

Ապրիլի 24-ին թուրքերը յարձակւեցին Ջանեա թաղի վրայ տաւար տանելու նպատակով. բարեբաղդաբար երեք զինւորներ վրայ են հասնում և ազատում: Այդ ընդհարման ժամանակ սպանւում է մի հայ զինւոր դատաստանական քննիչի ու պրիստաւի ներկայութեամբ: Զայրացած պրիստաւը շատ խիստ արձանագրութիւն է կազմում, սակայն այդ էլ անհետևանք է անցնում շնորհիւ գաւառապետ Ֆլեքենսկու:

Ապրիլի 25-ին գաւառապետը հայ-թուրքական ժողով էր կազմել «Շիհար-Երի» կոչուած ռուսական գաղութում: Խօսակցութեան նիւթն էր քոչի խնդիրը:

—Հայեր, ասում է նա, եթէ ձեր սահմաններում նոյն իսկ 10 վերստ հեռաւորութեան վրայ սպանւի մի թուրք, ամբողջ գիւղեր կը ռմբակոծեմ, կօզակների ոտքի տակ կոչնչացնեմ...

Միևնոյն ժամանակ կօզակներին հրահանգ է տրւած թուրքերին չը խուզարկել, որովհետև նրանք զէնքով պէտք է սար բարձրանան:

Իսկ եթէ այդ «զէնքով թուրքերը» սպանում են հայերին, նոյն իսկ պետական զինւորին—այդ ոչինչ, սովորական դէպք է:

Ահա այսպէս է մեր վիճակը, այսպէս է մեր իշխանաւորների արդարադատութիւնը:

Ջիւանշիրի գաւառ

Հասան-Րիզա և Առաջաձոր կօզակներ են ուղարկւած: Թուրքերը անարգել շարունակում են աւազակութիւններ ու սպանութիւններ:

Ի՞նչ է լինելու այս բոլորի վերջը:

Մ'ովսէս գիւղ, Շամշադինի գաւ.

Ահա սով... Վերջապէս նա սկսեց տարածել իր սարսափ ազդող ճիրերը ամեն կողմը. այժմ գիւղացին մնացել է ձեռնունայն կանգնած մի սոսկալի ցաւի առաջ, որին յաղթելը իր ույժից վեր է: Դեռ սա բաւական չէ. այժմ էլ մեր հին կեղեքիչ-վաշխառու տէրերն են սկսել գիւղացու մնացած հիւթը ծծել, նոր-նոր ցաւերն ու դժբաղդութեան հարւածները, մեր աչքերի համար կեղեքելու ասպարէզ բաց արին: Մեր «աղա» խաւերը, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ փախչելով աւելի ապահով տեղեր, իրենց յոյսը դնում էին այժմ իրենց ձեռքին տանջւողների վրայ, որովհետև համոզւած էին, որ դրանք իրենց էլ կը պաշտպանեն:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Վրացիների օգտին. Նորաշէնի [illegible] բնակիչներից գիշերապահներ [illegible] հաշւից աւելացած—5 ր., Ստաւրոպոլից Նիկոլա Յովսէփեանից—5 ր., Փօթի Վասիլ Մամուլովի—1 ր. ընդամէն 11 ր. նախկինի հետ 17 ր.

ԹԻՖԼԻՍ

✦ Թիֆլիսի գեն.-նահանգապետի դիւանատունը գնացին տեղական վաճառականների կողմից ընտրւած անձերը և խնդրեցին, որ իրենց թոյլ տրւի խանութները փակել երեկոյեան ժամը 6-ին, որովհետև այդպէս աւելի յարմար է թէ իրենց և թէ իրենց ծառայողներից շատերին: Գնացողներն են հետևեալները պ. պ. Վասիլ Եղիազարեան, Եփ. Ծատուրեան, Ս. Կաֆեան, Դորօժնով, Արզմեանց, Գուրգէնով և Փօրաքով: Գեն.-նահանգապետը նրանց պատասխանել է, որ մինչև ներկայ մայիսի 15-ը ոչ մի պատասխան չէ կարող տալ, իսկ մինչ այդ պահանջւում՝ է խանութները բաց պահել մինչև երեկոյեան ժամը 8-ը:

✦ Երէկ մենք հաղորդել էինք Մետեխի բանտից փախած յանցաւորների մասին: Փախել են 3 կալանաւորներ՝ մի պահապան զինւոր հետները: Զինւորը թողել է հրացանը և փախել: Փախած կալանաւորներից 2-ը կրկին կերպակալել են: Բանտի գլխաւոր Ջլաւախօվին հեռացրել են պաշտօնից, իսկ բանտի հսկողութիւնը յանձնւած է 5-րդ քաղաքամասի պրիստաւի օգնական Գակիեվին:

✦ Վաղը, մայիսի 7-ին ժողովարանի ամառային շէնքում կայանալու է զբօսանք ծրի և էժանագին ճաշարանի օգտին, ինչպէս յայտարարւած է մեր լրագրում: Աչքի առաջ ունենալով այդ ճաշարանի օգտակար դերը և այն ահագին կարիքը, որ գոյութիւն ունի, պէտք է յուսալ, որ հասարակութիւնը չի խընայի իր կոպէկները և մեծ թւով կը յաճախէ զբօսանքին:

✦ Անցեալ երեկոյեան ժամը 9-ի մօտերքը Բեթլեհէմի փողոցում, մայթի վրայ ատրճանակով մահացու կերպով վիրաւորւած և արիւնքամ եղած գտան Թիֆլիսեցի Ռուբէն Բաղդասարեան անունով մի գիմնազիստ, 19 տարեկան:

✦ Անցեալ երեկոյեան ժամը 9-ին, Թիֆլիսի վաճառական Պետրոս Կաֆեանը, փակելով իր մագազինը, վերադառնում է տուն: Լերմոնտովսկի փողոցում նրան մօտենում է մի անյայտ անձ, տեղական զգեստներով և փող է պահանջում նրանից: Մերժում ստանալով, նա երկու անգամ ատրճանակ է կրակում Կաֆեանի վրայ, բայց վրիպում է: Կաֆեանի ձայնից հաւաքւում է մեծ բազմութիւն: Ժողովուրդը բռնում է սպանութեան փորձ անողին և յանձնում ոստիկանութեան:

✦ Թիֆլիսի գիւղացիական փոխադարձ վարկի ընկերութեան կառավարչի պաշտօնի համար կան հետևեալ թեկնածուները—Լասխիշվիլի, Կիպշիձէ, Մամացեվ և Կիտա Աբաշիձէ:

✦ Ա. Ն. Մանսուրովին թոյլատրւած է հրատարակել Թիֆլիսում մի երգիծաբանական շաբաթաթերթ:

✦ Թիֆլիսի «հայրենասիրական» միութեան նախագահ Ն. Ն. Շարօվը հրաժարւած լինելով, նրա փոխարէն ընտրւել է Ն. Գ. Շչուցկին:

✦ Բարերարների ուշադրութիւնը հրաւիրում ենք ծայրայեղ թշւառութեան դուռը հասած մի ընտանիքի վրայ: Հայրը թոքախտով հիւանդ, անկողին ընկած, արիւն է թքում: Կինը լուացք է անում, բայց 6 զաւակներին պահել չէ կարողանում: Հիւանդը տանում է իր կնոջ և զաւակների տանջանքները և հիւանդութիւնն աւելի ևս սաստկանում է: Այդ ընտանիքի հասցէն է—X քաղաքամաս, Малаканская ул. № 18, տուն Սարաճաղեանի, տիկին Սօֆիա Բեժանեանց: Վստահ, որ [illegible] չէ մեռել մարդկանց մէջ և բարերարութիւնը չէ հանգել ընդմիշտ, թշւառ ընտանիքը կոչ է անում, օգնութեան ձիգ է երկարում:

ԿՈՎԿԱՍ

✦ Շուշայից մեզ հաղորդում են. «Զանգեզուրի գաւառից Պետական Դումայի համար նահանգական լիազօրների ժողովին մասնակցելու համար պիտի ընտրւեն 7 լիազօր. 2-ը գիւղացիներից և 5-ը կալւածատէրերի կողմից: Մայիսի 3-ին տեղի ունեցաւ գիւղացի լիազօրների ընտրութիւնը: Հայերից ներկայ էին ընդամէնը 6 ընտրող, մնացած ահագին բազմութիւնը թուրքեր էին: Չը նայած այս հանգամանքին թուրք ընտրող գիւղացիները առաջարկում էին պ. Վախտանգ Մեհրաբեանին դնել իր տուելը: Վերջինս հրաժարւում էր: Սակայն, մի բան հետաքրքիր և ուսուցողական էր, որ երբ թուրք գիւղացիները պնդում էին Մեհրաբեանին դնել իր թեկնածութիւնը, նախագահը փորձեր էր անում գիւղացիներին համոզելու, որ չը ստիպեն, ուրիշին ընտրեն, ասելով, «ընտրեցէք ուրիշի, ինչու պնդում էք դրան, քանի որ ինքը չէ ուզում»:

Գիւղացիները ուշք չը դարձնելով նախագահի խօսքերին, պնդելով իրենց մէջ, որ նա իբրև գիւղացի, իրենց շահերն աւելի լաւ կարող է պաշտպանել, նորից և նորից առաջարկեցին դնել իր տուելը: Եւ երբ սա դրեց իր թեկնածութիւնը, վիճակով խնդրողներին, համարեա ձայների բացարձակ մեծամասնութեամբ ընտրւեց»:

✦ Քութայիս: Քութայիսի բանտում գտնւած քաղաքական յանցաւորները սպասում էին ապրիլի 27-ին, որովհետև կարծում էին թէ նոյն օրը կը լինի քաղաքական ներումն և իրենք վերջապէս դուրս կը գան մութ ու մայլ բանտից և ազատ շունչ կը քաշեն. սակայն ներման փոխարէն, հէնց նոյն օրը կարծես ծաղրելով նրանց թշւառ դրութիւնը, յայտարարեցին 42 բանտարկեալներին, որ մայիսի 4-ին բոլորն էլ աքսորւում են Ռուսաստանի ներքին նահանգները:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

✦ Դումայի նախագահը զանազան կողմերից 300-ի չափ շնորհաւորական հեռագիրներ է ստացել, որոնց մէջ ջերմ շնորհաւորանքներ են ուղղում ժողովրդի ներկայացուցիչներին և ցանկութիւն են յայտնում ու հաւատում են, որ նրանք անպայման զլական կերպով պահանջ կը դնեն անհրաժեշտ ազատութիւնների և ամնիստիայի քաղաքական ներման մասին:

✦ Լուրերին նայելով՝ ներքին գործերի նոր մինիստրն ընդունից, ներման խնդիրը իբրև անհրաժեշտութիւն ի նկատի ունենալով ներկայ հասարակական տրամադրութիւնը և Դումայի անդամների վճռողական պահանջը:

(Р. В.

✦ Բարձրագոյն [illegible] երախտագիտութիւն և շնորհակալութիւն է յայտնւած Կօկօվցևին՝ կատարած յաջող փոխառութեան առթիւ և շնորհւած է Ալեքսանդր Նեվսկու շքանշանը:—Իսկ թէ որքան է յաջող այդ փոխառութիւնը, մեր ընթերցողներն արդէն գիտեն:

✦ Ապրիլի 28-ին Պետերբուրգում, սահմ.-ռամկավարների կլուբի առաջ հաւաքել է

Պատգամաւոր Նակոշկինը, սահմանադրական ռամկավար կուսակցութեան անունից յայտնում է, որ այս օրերս այդ կուսակցութիւնը Դումայի քննութեանը կառաջարկէ իր հողային ծրագիրը:

Աջակողմեան պատգամաւորները կոմս Գէյդէնի հետ միասին յայտնում են, որ նրանք դէմ չեն մասնաւոր—սեփականատիրական հողերի ստիպողական գրաւմանը, որովհետև ներկայումս անհատական, մասնաւոր սեփականատիրական շահերը պիտի տեղի տան Պետական շահերի առաջ:

Ճառերը շատ են: Առաջարկւում է հռետորների թիւը սահմանափակել, որը Դումայի կողմից մերժւում է:

Պատգամաւոր Պլեմաննիկօվը այդ առթիւ բողոքում է աւելորդ, երկար, անհամ ճառամաբանութիւնների դէմ: Նա յիշեցնում է Դումային, թէ անհրաժեշտ է որքան կարելի է շուտով ուղղերձը խմբագրել, որովհետև դրա հետ կապւած է հազարաւոր բանտարկեալների բաղդը:—«Մենք այստեղ խօսում ենք—ասեց նա,—իսկ այդ ժամանակ մահւան դատավճիռները կարող են ի կատարածել իրագործւել»: Դրանից յետոյ շատ պատգամաւորներ հրաժարւեցին իրենց տրւած խօսքից: Չը նայելով, որ արդէն վճռւած էր ընդմիջում չանել, 8½ ժամին 10 րոպէով ընդմիջում յայտարարւեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մայիսի 4-ին: Ուղղերձի նախագծի այն մասը, որը վերաբերւում է հողային հարցին ընդունւած է միայն մի փոփոխութիւնով. այդ փոփոխութիւնը կայանում է նրանում, որ այն հողերի թւին, որոնք պիտի ստիպողաբար գրաււեն հողային ֆօնդը, աւելանում են նաև եկեղեցական հողերը: Բանւորական լուսաւորութեան և կրթութեան հարցերին վերաբերող մասերն ընդունւած են առանց փոփոխութիւնների: Այնուհետև սկսեց քննել պետական նախահաշւին վերաբերող մասը: Այստեղ ինքը յանձնաժողովը մի քանի պատգամաւորների առաջարկով իրեն առաջարկից նախագծի բնագրի մէջ մի փոփոխութիւն մըտցնել, որով աւելի ևս ճշգրիտ որոշւում է ամեն տարի պետական նախահաշւի կազմելու անհրաժեշտութիւնը: Այդ փոփոխութիւնն ընդունւած է:

Այնուհետև Դուման անցնում է ազգերի հաւասար իրաւունքներ ստանալու հարցին նւիրւած քննութեանը: Տեղի ունեցաւ հետևեալ միջնադէպը: Կօնցևիչ քահանան (Վօլինի նահանգ) խնդրում է այդ կէտի վերջում աւելացնել—«որպէսզի Ռուսաստանը կորցնէ իր ինքնուրոյնութիւնը և նոյն իսկ իր անունը»: Ծաղրական բացականչութիւններ, ծիծաղ, հեգնական խօսքեր:

Պատգամաւոր Պետրաժիցկին խնդրում է նախագահից Կօնցևիչին կարգի հրաւիրել, որովհետև նա իր այդպիսի վարմունքով վիրաւորում է Դումայի արժանապատւութիւնը: Ծափահարութիւններ:

Նախագահը երբ առաջարկեց քւէարկել Կօնցևիչի լրացումը, բոլորը դրա դէմ բողոքեցին: Ընդունւած է միաձայն ուղղերձ—պատասխանի բնագրի և այդ կէտը:

Պրոֆեսոր Կօվալևսկին առաջարկում է մտցնել հետևեալ նոր աւելացումը ուղղերձի մէջ.—«վերածնւած Ռուսաստանը նոր կեանք է սկսում՝ ազատութեան և ինքնորոշման սկզբունքների վրայ հիմնւած. այդ ազատութիւնը և ինքնորոշումը ոչ թէ միայն առանձին անհատների վերաբերմամբ, այլ և ամեն ազգային միութեան համար պիտի գոյութիւն ունենայ: Շարունակելով իր գոյութիւնը որպէս մեծ պետութիւն, Ռուսաստանի հոգսը պիտի կայանայ նրանում, որպէսզի հաստատ պահէ իր դիրքը եւրօպական մեծ ժողովրդների քաղաքական ընտանիքում, պահպանէ նրանց հետ բարեկամական յարաբերութիւնները, բոլոր ազգերի. Նամանաւանդ սլաւօնականութեան ազատ զարգացմանը պաշտպան հանդիսանայ. Նա պարտաւոր է հոգալ իր սահմանների ամբողջութեան և իր անկախութեան համար: Տէր արքայ, Ձերդ մեծութեան ձգտումը ժողովրդական խաղաղութիւնը իրականացնել մեր հայրենիքում, հնարաւոր կը դառնայ միայն այն ժամանակ երբ կը վերանայ նախկին դժգոհութիւնը ու ժողովրդական տրտունջը, որին շատ անգամ, աւելի է ինքը կառավարութիւնը իր աշխարհակալական պատերազմներ վարելու ցանկութեան պատճառով»:

Նաբօկօվը և միւս հռետորները առարկում են դրա դէմ, գտնելով որ դա թուլացնում է ուղղերձի տպաւորութիւնը: Երբ Կօվալևսկու առաջարկը քւէարկութեան դրւեց — մերժւում [illegible]: Ընդունւած է յանձնաժողովի խմբագրութեամբ առաջարկւածը: Դուման անցնում է ուղղերձի վերջին կէտին, որի մէջ խօսւում է ամնիստիայի մասին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մայիսի 4: Պետական Դումայում, ամնիստիայի առթիւ ծագած վիճաբանութիւնների սկզբում հէնց առաջարկեցին և ընդունեցին մի քանի փոփոխութիւններ, որոնք աւելի ճշտօրէն որոշում են այն անձանց կատեգօրիաները, որոնց համար ամնիստիան ցանկալի է: Այդպիսիք ճանաչեցին քաղաքական, կրօնական, հողային հարցերի պատճառով յանցանքներ գործածները:

Ստախօվիչը առաջարկում է մտցնել մի լրացում—կոչ դէպի ժողովուրդը. որով յոյս է յայտնում թէ սրանից յետոյ կը վերջանան քաղաքական սպանութիւնները, և ապացուցանում էր, որ դա քաղաքական սպանութիւնների դատապարտութիւնը չէ, այլ մի պարզ ցանկութիւն երկրի մէջ հանդարտութիւն հաստատել (ծափահարութիւններ):

Դրան առարկում է Րօդիչևը, որը յայտնեց, թէ ինքը պատրաստ է ստորագրել Ստախօվիչի խօսքերի տակ, բայց անյարմար է գտնում մի օրէնսդրական ժողովի համար, նոյնիսկ, մի անուղղակի դատապարտութիւն յայտնել քաղաքական սպանութիւններին: Եթէ դրանց առթիւ անհրաժեշտ է մի կոչ գրել ժողովրդին, պիտի չը մոռանալ դատապարտել նաև արքունի գանձարանի գողերին: Դա դատարանի գործն է, իսկ մեր գործը կայանում է նրանում, որ վերացնենք այն պատճառները, որոնք յանցագործութիւններ են ծնեցնում: Ներկայ դէպքում պատճառները ժողովրդական զրկւած տրամադրութեան մէջ էին կայանում, որը ծագեց և զարգացաւ կառավարութեան գործ դրած բռնութիւնների ազդեցութեան տակ: Այնուհետև հռետորն սկսեց պատմութեան ենթարկել կառավարութեան այն բոլոր քայլերը, որոնք յանցագործութիւններ ծնեցրին: Դուման մի փոթորկալից օվացիա սարքեց Րօդիչևին:

Բօչարօվը առաջարկում է ուղղերձի մէջ մտցնել և Դումայի հաւատարիմ հպատակութեան հաւաստիքները:

Նաբօկօվը դրան առարկեց, որ ապագայ գործունէութեան ծրագիր հանդիսացող ուղղերձը զգացմունքների զեղման տեղ չէ կարող տալ իր էջերում: Դրանից յետոյ հռետորների ցուցակը դադարեցւում է:

Կոմս Գէյդէն.—«Խնդրում ենք անւանական քւէարկութեան ենթարկել առաջարկւած փոփոխութիւնները, որպէսզի ամբողջ երկիրը գիտենայ, թէ ով ինչ փոփոխութեան կողմնակից է: Դուման մերժում է այդ առաջարկը:

Այնուհետև ուղղերձի վերջին մասն ընդունւեցաւ միաձայն: Նիստը փակւեց ժամը մէկից քանի րոպէ անց: Նոր նիստ նշանակւած է մի ժամ յետոյ:

Նիստը փակելուց առաջ լսեց 50 պատգամաւորների անյետաձգելի հարցապնդումը ներքին գործերի մինիստրին [illegible] մէջ հրատարակւած մի քանի դօկումենտների առթիւ, որոնք ապացուցանում են, որ ոստիկանութեան դեպարտամենտը ինքը մի քանի տեղերում քաղաքական յանցագործութիւնների դրդիչ է հանդիսացել:

Միաձայն որոշւում է այդ առթիւ հարցապնդում անել:

Ընդմիջումից յետոյ սկսեց ուղղերձի նախագծի երրորդ ընթերցանութիւնը: Նաբօկօվը կարդաց ամբողջ ուղղերձը իր վերջնական ձևով: Պետրաժիցկին կոչ է անում բոլորին միաձայնութեան, միահոգի լինել: Գէյդէնը յայտնում է, որ նա չի կարող հաշտւել այդ ուղղերձի հետ, բայց չը ցանկանալով խանգարել Դումայի միաձայնութիւնը, դուրս է գալիս նիստի դահլիճից: Նրա յետևից, նրանից յետոյ դուրս եկան Ստախօվիչը, իշխան Վոլկոնսկին և ուրիշ երկուսը: Ուղղերձն ընդունւեցաւ միաձայն:

Նաբօկօվը առաջարկում է յանձնարարել Դումայի նախագահին, նրա երկու ընկերներին և Դումայի քարտուղարին ուղղերձը Թագաւորին ներկայացնել:

Նախագահը յայտնում է, որ նիստի հետևանքը իսկոյն և եթ Կայսեր կը զեկուցի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մայիսի 5: Երէկ երեկոյեան Պետական Խորհուրդը սկսեց քննել գահական ճառի պատասխանի համար կազմած յանձնաժողովի առաջարկած նախագիծը: Յանձնաժողովի մեծամասնութիւնը յիշում է նախագծի մէջ ամնիստիայի մասին, բայց Պետական Խորհրդում դրա հակառակորդները շատ են: Սենատոր Տագանցևը մի փայլուն ճառ արտասանեց, որը նւիրւած էր ամնիստիայի պահանջի պաշտպանութեանը:

Բացի նրանից ամնիստիայի կողմն էին Բագալէյը, Լապպա-Դանիլևսկին, Շիպօվը, Վերնադսկին:

Ամնիստիայի դէմ էին Սամարինը, իշխան Կասատկինը, Բիտօվսկին, Ուշակօվը, Անտօնիօ եպիսկոպոսը, Ակիմօվը, Գօնչարօվը:

Նիստը կը շարունակւի այսօր ժամը մէկից սկսած:

Վիտտէն սկզբունքով պաշտպանում է ամնիստիան, բայց դա այնպէս պէտք է կատարւի, նրա կարծիքով, որպէս զի յեղափոխութեան նոր բռնկումների պատճառ չը դառնայ:

ՄԱՄՈՒԼ

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

ՀՐԱՒԷՐ

Ամսոյս 7-ին կիրակի օրը ժամի 12-ին վանքի եկեղեցու ծխականները երկրորդ անգամ հրաւիրւում են ժողովի իրենց միջից մի ներկայացուցիչ ընտրելու, որ միւս եկեղեցեաց ներկայացուցիչների հետ ընտրին չորս պատգամաւոր հայ-Թարքական խաղաղութեան ժողովին մասնակցելու, որ կայանալու է գիւղական նահանգապետի մօտ։

Դ. ...

ЖЕЛАЮ КУПИТЬ

не дорого

РУЧНУЮ ТИПОГРАФИЧЕССКУЮ МАШИНУ

(б а с т о н к а)

Адресовать, Бебутовская 7. Г. Аветисову.

№ 183 1—2

Հանրամատչելի ներկայացում № 4

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, մայիսի 7-ին

Թիֆլիսի ժողովարանի հայ թատրոնասէրների խումբը, մասնակցութեամբ գեղասանուհի տիկ.

Մ ա յ ս ու ր ե ա ն ի

Կը ներկայացնէ

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Կոմ. 5 գործ. հեղ. Դուզոլի, թարգմ. Տէր-Աստուածատրեանի.

Մասնակցում են. տ. Մայսուրեան, օր. օր. Օթարեան, Զալալեան, Միլիկեան, պ. պ. Վահնջեր, Տէր-Դրիգորեան, Տէրինեան, Սարեան, Գալուստեան, Լաչքարեան, Ղուչչեան, Եղեկեան, Կարապետեան, Այրեանեան, Բէժանեան, Մարտիրոսեան, Օթարեան, Սահակեան և ուրիշ.

Սկիզբը ուղիղ 8 ժամին

Տեղերի գինը 80-ից մինչև 10 կ. օթեակ 2 ր.

Արարուածներին կը նուագէ զինուորական-երաժշտական խումբը.

Տոմսակները վաճառւում են մթերային Թատրոնի կասսայում.

Շուտով լինելու է տիկին ՄԱՅՍՈՒՐԵԱՆԻ բենեֆիսը.

Հերթ. կարգադրիչ Շահվերդեան

2—1 191 Ռեժիսոր տ. Մայսուրեան

ՌԱԶՄԻԿ

Լրագիր ազգային, գրական և քաղաքական Կը հրատարակի չորեքշաբթի և շաբաթ օրերը.

Բաժանորդագրութիւն

Բուլղարիա տարեկան—10 ֆրանկ

Վեց ամսեայ— 5 ֆրանկ

Արտասահման տարեկան—13 ֆրանկ

Վեց ամսեայ— 7 ֆրանկ

Ամերիկա տարեկան—2-5 դոլար

Վեց ամսեայ—1-5 դոլար

Ծանուցման տողը 4-րդ երեսի վրայ 15 սանտիմ. «Ռազմիկ»-ի բաժանորդներուն 10 սանտ.

Հասցէ. խմբագրութիւն «Ռազմիկ» լրագրի, Ֆիլիպէ.

Пловдивъ, редакція на вѣстникъ „Размикъ". Redaction du journal «Razmig» Philippopolis (Bulgarie) փ. 5—1

Լոյս տեսաւ և վաճառւում է

պրոֆ. Վ. Զոմբարտ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Հեղինակից թոյլտրած թարգմ. գերման. Խմբագրութեամբ և յաւելած—բառաթերթով

ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆԻ

151 երես, գինը 40 կոպ.

Գումարով գնողներին զիջւում է 20%, զեղչ Նոյն հեղինակի «Տնտեսական և սօցիալ-քաղաքական հարցեր», գինն է 10 կոպ. Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և թարգմանչին այս հասցէով. Тифлисъ, армян. семинарія Нерсесянъ, А. Абегянъ

Կարելի է ստանալ նաև «Ալիք»-ի խմբագրութեան մէջ։

Իմ 3—4 երեխաների համար

Հարկաւոր է գիմնազիստուհի մի հայուհի

տնային դաստիարակչուհու պաշտօնով, որ լաւ գիտենայ նաև հայերէն։ Վարձատրութիւնն է ամսական 25 ր. ռոճիկ, ճաշ, բնակարան և ամեն յարմարութիւն։ Ցանկացողներին խնդրւում եմ դիմել «Ալիք»-ի խմբագրութեան։

136 5—2

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՋԱՐԿ»

Տպագրւում է և շուտով լոյս կը տեսնեն

1) Ասպրիայի ճգնաժամը (լեզու և ազգ) Կ. Կաուցկու

2) Գիւղացիական հարցը Ֆրանսիայում և Գերմանիայում—Ֆ. Էնգելսի.

Թարգմանութիւն Գար. Պապօվեանի

163 3—5

Լոյս տեսաւ և վաճառւում է

Ն. ԱԶԲԵԼՕՎԻ

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Թարգմանեց օր. Ն. Թալիբեան

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին

4—4